ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար տեղեկատվական տեսածրագրերի արտադրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/4-01/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» փետրվարի 2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արման Խաչատրյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ դատական դեպարտամենտի արարողակարգի և հասարակայնության հետ կապերի վարչության պետ,

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Անահիտ Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում է՝

Արմեն Ասլանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/4-01/17» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2017թ.-ի փետրվարի 17-ին, ժամը 10:00-ին:

2. **Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գինը /ՀՀ դրամ/
1	Տեղեկատվական տեսածրագրերի արտադրության ծառայություններ	4 500 000

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Հասցեն, հեռախոսահամարը
«ԱԶԴ» ՍՊԸ	ք. Երևան, Չարենցի փ. 7, բն. 35, հեռ. (093) 345421
«Բարս Մեդիա» ՍՊԸ	ք. Երևան, Թումանյան 12 շ., 40բն., հեռ. (041)226733, (093)899444
«ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Երևան, Բաբաջանյան 31 շ., 45 բն., հեռ. (091) 494333 (010) 733345
«ԱՐՏԻՍՏ» ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտաս 56 շ., բն. 90, հեռ. (077) 216556

4. Համակարգում 08.02.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

5. Տվյալներ՝ բացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ԱԶԴ» ՍՊԸ-ի, «Բարս Մեդիա» ՍՊԸ-ի, «ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ի, «ԱՐՏԻՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «ԱԶԴ» ՍՊԸ-ի, «ԱՐՏԻՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց «ԱԶԴ» ՍՊԸ-ի, «ԱՐՏԻՍՏ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

6.2 «Բարս Մեդիա» ՍՊԸ-ի, «ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան. հայտերը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետով (հրավերի 1-ին մասի 7.9 կետ) սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով»:

Հաշվի առնելով, որ «Բարս Մեդիա» ՍՊԸ-ն, «ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած «Ընթացակարգին մասնակցելու դիմում»-ում (Հավելված 1) հայտնել և հավաստել են, որ հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ուստի պետք է փաստաթղթերը հաստատված լինեին էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հանձնաժողովը որոշեց «Բարս Մեդիա» ՍՊԸ-ի, «ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետը, 44-րդ կետի 4-րդ ենթակետը և 45-րդ կետը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Մասնակիցների առաջարկած գները՝

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ԱԶԴ» ՍՊԸ					«Բարս Մեդիա» ՍՊԸ				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/	Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Տեղեկատվական տեսաձրագրերի արտադրության ծառայություններ	4 000 000	700 000	4 700 000		4 700 000	6 201 000	689 000	6 890 000		6 890 000

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ					«ԱՐՏԻՍՏ» ՍՊԸ				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/	Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Տեղեկատվական տեսաձրագրերի արտադրության ծառայություններ	3 740 000	1 230 000	4 970 000		4 970 000	3 981 500	318 500	4 300 000		4 300 000

8. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏԻՍՏ» ՍՊԸ-ին:

Բավարար գնահատված մյուս մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017թ. փետրվարի 27-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արման Խաչատրյան

Անդամներ՝ Կարեն Մելքոնյան

Անահիտ Ավագյան

Աղավնի Բուդուլյան

Քարտուղար՝ Արոա Խաչատրյան